ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4/2016 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Երևան <<29>> հունվարի 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վառմաշ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Աֆոյանի ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 24-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Ձորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Սույն Պայմանագրով սահմանված 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 16 273 000 (տասնվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Վառմաշ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Վանաձոր, Գործարանային 15
Կենտրոնական Գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎ 900011012136	ՀՎ 1930007407070100
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 06912201
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4/2016 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2016թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	Հայաստանի Հանրապետության Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Ձորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքների	**4,068,250,0**	**4,068,250,0**	**4,068,250,0**	**4,068,250,0**	**16,273,000,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վառմաշ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4/2016 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Հայաստանի Հանրապետության Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Ձորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքների	2,712,167,0	2,712,167,0	2,712,167,0	6,780,417,0	6,780,417,0	6,780,417,0	10,848,668,0	10,848,668,0	10,848,668,0	16,273,000,0	16,273,000,0	16,273,000,0	16,273,000,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վառմաշ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201

(ստորագրություն)
Կ.Տ.

12.01

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՄԻԳ-16/1-4»

ք. Երևան «24» դեկտեմբերի 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վառմաշ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Աֆոյանի ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Ձորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 16 273 000 (տասնվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 9 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Վառմաշ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Վանաձոր, Գործարանային 15
Կենտրոնական Գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎ 900011012136	ՀՎ 1930007407070100
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 06912201
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«24» դեկտեմբերի 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքների գնման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը

1.6. Պատվիրատու - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

2. Տեխնիկական բնութագիր

Ա) Տեխնիկական տվյալները

Անվանումը	Երկարությունը	Երկայնական սխեմա	Լայնությունը	Նյութեր /հիմնական/	Կառուցման տարին	Հաշվ.բեռ
Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամուրջ	102 մ	18+3x63+18	2+9.5+2.46+9.5+2	Պողպատ ե/բ	1981թ.	Հթ-60 ՀԿ-810 Շ-14

Կամրջի թռիչքը ծածկում է Զորագետ գետի բացվածքը: Եզրային թռիչքային կառուցվածքները հավաքովի երկաթբետոնե սալերից են , իսկ կենտրոնական թռիչքային կառուցվածքները անխզելի պողպատ-ե/բ կոնստրուկցիաներ են:

Բ) Տեխնիկական պահանջները

1. Ապահովել Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանումը և նրա կազմում ընդգրկված օբյեկտների ամբողջականությունը, անվնաս շահագործումը, մաքրությունը և նորմալ աշխատանքը:

2. Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանման հիմնական սկզբունքն է՝ կամուրջի կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների առաջացման կանխարգելումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել կամուրջի զննման, հսկողության, խնամքի և կանխարգելիչ նորոգման ամբողջական աշխատանքներ: Նշված աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական նորմերին, կանոններին և այլ նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 156+600-ում Զորագետ գետի վրայի կամրջի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են կամուրջների պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

2.1) Զննումների և դիտարկումների իրականացում

Զննումները և դիտարկումները պետք է կատարվեն կապալառուի կամուրջների պահպանման պատասխանատուի կողմից նվազագույնը երեք օրը մեկ անգամ: Զննումները և դիտարկումները պետք է ուղղված լինեն՝

ա) Կամրջի ընդհանուր վիճակի գնահատմանը

բ) Վնասվածքների և առաջացած թերությունների հայտնաբերմանը

գ)Վնասվածքների և առաջացած թերությունների վերացման համար անհրաժեշտ աշխատանքային ծավալների գնահատմանը:

Զննումները և դիտարկումները իրականացնելու ժամանակ անհրաժեշտ է օգտագործել հետևյալ սարքավորումները՝ լուսանկարչական ապարատ, հեռադիտակ, խոշորացույց, թեոդոլիտ, արանքչափիչներ, հարթաչափ, ուղղալար (OP-2 տիպի կամ հավասարազոր), մետաղական քանոններ (0.5 և 1.0 մ), մետաղական և փայտյա մուրճեր, չքայքայող մեթոդով ստուգման համար այլ սարքավորումներ:

Զննումները և դիտարկումները պետք է իրականացվեն հետևյալ կոնստրուկտիվ տարրերի վիճակը ուսումնասիրելու նպատակով՝

Կոնստրուկտիվ տարրի անվանումը	Զննման ենթարկվում են՝	Հատուկ ուշադրության արժանացնել՝
Կամրջային մոտեցումներ	Ճանապարհային ծածկ և մայթեր	Անհարթություն, ճաքեր և փոսեր, վնասվածքներ, նստվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կողնակներ	Անհարթություն և փոսեր, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Թեքլանջ	Հարթեցում, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Պարսպող համակարգ (արգելափակոցներ)	Վնասվածքներ, բացակայություն
	Ջրահեռացման համակարգ	Վնասվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
Ենթակամրջային գոտի	Հենապատեր,կարգավորիչ պատեր և ջրահեռացման վաքեր	Քայքայում, վնասվածքներ
	Ենթակամրջային բացվածք	Նեղացում, հենարանների ողողում, ողողատների առկայություն
Կամրջային պաստառ	Ճանապարհային ծածկ	Անհարթություն, ճաքեր և փոսեր, վնասվածքներ, նստվածքներ, թափվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կամրջի կապակցումը մոտեցումներին	Նստվածքներ, ճաքեր և փոսեր
	Պարսպող համակարգ	Վնասվածքներ, բացակայություն

	(արգելափակոցներ)	
	Մայթեր	Ճաքեր, փոսեր, այլ վնասվածքներ
	Ջրահեռացման համակարգ	Բացակայություն, վնասվածքներ, աղբ, ավելորդ առարկաների առկայություն
	Կամրջով անցնող կոմունիկացիաներ	Ամրացում, վնասվածքներ որոնք կարող են վնաս պատճառել կամրջին
	Դեֆորմացիոն կարեր	Վնասվածքներ
Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնյա,բետոնյա և քարե)	Հեծաններ	Ճաքեր, խոնավացման գոտիների առկայություն, դեֆորմացիաներ,քայքայում, այլ վնասվածքներ
Թռիչքային կառուցվածքներ (երկաթյա)	Հեծաններ	Դեֆորմացիաներ, ճաքեր, ներկի վնասվածքներ, այլ վնասվածքներ
	Դուրգամակարեր և եռակցման կարեր	Ընդհանուր վիճակ, կոռոզիա և այլ վնասվածքներ
Հենարաններ	Հենարան	Ընդհանուր վիճակ, ճաքեր , քայքայում, թեքվածք և այլ վնասվածքներ
	Հիմք (երնացող մաս)	Ընդհանուր վիճակ, ճաքեր , քայքայում, թեքվածք, ողողում և այլ վնասվածքներ
Հենարանային մասեր	Հենարանային մասեր	Աղտոտվածություն, հենարանային մասերի թեքության անկյուն, կոռոզիա, ռետինե մասերի վնասվածքներ, բետոնի քայքայում

Կապալառուի կամուրջների պահպանման պատասխանատուն պարտավոր է գրանցումներ կատարել կապալառուի կամրջի պահպանման մատյանում, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զննման արդյունքում հայտնաբերված վնասվածքները կամ թերությունները վերացնելու ուղղությամբ, երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների դեպքում, շտապ (մեկ ժամվա ընթացքում) զեկուցել պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

2.2) Հսկողության ապահովում

Հսկողությունն իրականացնում է կապալառուի կամրջի պահպանման պատասխանատուն ՝ առնվազն շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները) գրանցվում են կապալառուի կամրջի պահպանման մատյանում ու համապատասխանաբար ստորագրվում են:

2.3) Խնամքի և կանխարգելիչ նորոգման ապահովում

Կամրջի կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների, համակարգերի կանխարգելիչ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է՝ կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը: Այդ նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները:

Որպես խնամքի և կանխարգելիչ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել կամրջի մաքրման, աղբի հեռացման, կամրջային շինությունների և կահավորանքի աշխատանքային վիճակում գտնվելու ապահովման, երթևեկամասի և մայթերի շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, կամրջի վրա առաջացած թերությունների / վնասվածքների վերացման աշխատանքներ:

3. Ստորև բերված են կամրջի հիմնական կոնստրուկտիվ տարրերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնց ապահովման նպատակով կապալառուն պարտավոր է տեղամասում իրականացնել հերթապահություն:

Կամրջի պահպանման ենթակա կոնստրուկտիվ տարրերը և դրանց պահպանման հիմնական պահանջները

No	Կոնստրուկտիվ տարրի անվանումը	Պահպանման պահանջը	Պահպանման պահանջը ապահովելու համար պահանջվող հիմնական աշխատանքներ, որոնք պարտադիր են կատարման համար կապալառուի կողմից
1.	Կամրջային մոտեցումներ	Կամրջային մոտեցումների պահպանումը բերված պահանջների համապատասխան	1.Կողնակների հարթեցում 2. Ջրահեռացման վաքերի մաքրում աղբից, թափվածքներից, ավելորդ առարկաներից և ջրահեռացման ապահովում: Վնասվածքների վերանորոգում: 3. Հողային պաստառից ջրահեռացման ապահովում 4. Ճանապարհային նշանների մաքրում, վերանորոգում, անհրաժեշտության դեպքում՝ նորերի տեղադրում 5. Ճանապարհային ծածկի մաքրում աղբից, թափվածքներից, ավելորդ առարկաներից 6. Ճանապարհային ծածկի և մայթերի վրա առաջացած ճաքերի լցնում 7.Ճանապարհային ծածկի և մայթերի վրա առաջացած փոսերի վերանորոգում 8. Պարսպող համակարգի (արգելափակոցների) վերանորոգում, ուղղում, լրացում և ներկում 9. Նստվածքների վերանորոգում
2.	Ենթակամրջային գոտի	Ենթակամրջային գոտու պահպանումը բերված պահանջների համապատասխան	1. Ենթակամրջային թեքլանջերի մաքրում աղբից, բուսականությունից և ավելորդ առարկաներից 2. Ենթակամրջային գոտում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի մաքրում ցեխից,բուսականությունից և ավելորդ առարկաներից 3. Ենթակամրջային թեքլանջերի հարթեցում 4. Ենթակամրջային գոտում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա առաջացած վնասվացքների (որոնք հնարավոր է վերականգնել առանց հիմնական վերակառուցում իրականացնելու) վերանորոգում:
3.	Կամրջային պաստառ	Կամրջային պաստառի պահպանումը բերված պահանջների համապատասխան	1. Կամրջային պաստառի մաքրում աղբից, ձյունից, բուսականությունից և ավելորդ առարկաներից 2. Ճանապարհային ծածկի և մայթերի վրա առաջացած ճաքերի և փոսերի վերանորոգում: Նշագծման իրականացում: 3.Մերկասառույցի առաջացման դեպքում՝ ճանապարհային ծածկի և մայթերի մշակում հակամերկա-սառուցային նյութերով 4. Պարսպող համակարգի (արգելափակոցների) վերանորոգում, ուղղում, լրացում և ներկում 5. Բազրիքների վերանորոգում, ուղղում լրացում և ներկում 6. Դեֆորմացիոն կարերի մաքրում ցեխից և աղբից: 7. Ճանապարհային ծածկի վերանորոգում դեֆորմացիոն կարերի գոտում 8. Դեֆորմացիոն կարերի մշակում բիտումային մածիկով 9. Պարապետների, եզրաքարերի և

			անվահիչների վերանորոգում, լրացում
4.	Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնյա,բետոնյա և քարե)	Թռիչքային կառուցվածքների պահպանումը բերված պահանջների համապատասխան	1. Թռիչքային կառուցվածքների մաքրում ցեխից և աղբից 2. Ճաքերի , ջարդվածքատեղերի վերանորոգում 3. Բետոնի պահպանիչ շերտի վերանորոգում 4.Բացված ամրանների մշակում՝ կոռոզիայից պահպանման համար
5.	Թռիչքային կառուցվածքներ (երկաթյա)	Թռիչքային կառուցվածքների պահպանումը բերված պահանջների համապատասխան	1. Թռիչքային կառուցվածքների մաքրում ցեխից , յուղաբծերից և աղբից: Վնասված ներկի վերականգնում 2. Մետաղյա կոնստրուկցիաների լվացում՝ դեֆորմացիոն կարերի գոտիներում 3. Վնասված դուրգամակարերի և եռակցման կարերի վերանորոգում
6.	Հենարաններ	Հենարանների պահպանումը բերված պահանջների համապատասխան	1 . Ճաքերի , ջարդվածքատեղերի վերանորոգում 2. Հենարանների մաքրում բուսականությունից 3. Վնասված մակերեսի ջրամեկուսացում
7.	Հենարանային մասեր	Հենարանային մասերի պահպանումը բերված պահանջների համապատասխան	1. Հենարանային մասերի մաքրում ցեխից 2. Հենարանային մասերի յուղում և ներկում 3. Հեղյուսների պնդացում

4. Կապալառուն պարտավոր է վարել կամրջի պահպանման աշխատանքների մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված էջերով և պատվիրատուի կողմից կնքված: Մատյանը պետք է պահվի կապալառուի գրասենյակում և տրամադրվի տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի և "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության լիազոր ներկայացուցիչներին՝ կամրջի պահպանման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ գրանցելու նպատակով: Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնին և/կամ տվյալ կամրջի պահպանումը իրականացնող կազմակերպությանը իրազեկել կամրջի վիճակի մասին:

5. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհների վրա գտնվող կամուրջների պահպանման աշխատանքները ուսումնասիրվում, գնահատվում և ընդունվում են տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի ճանապարհների պահպանման պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ պատասխանատու) կողմից: Ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի ճանապարհների պահպանման պատասխանատու է սահմանվում <<Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

6. Կամրջի պահպանման աշխատանքները ընդունվում են հետևյալ կերպ՝

<u>ա) Պահպանման միջանկյալ դիտարկում</u>

Կամրջի պահպանման միջանկյալ դիտարկումները իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երեք անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է կամրջի պահպանման համապատասխանությունը պահանջներին և առկա թերություններն արձանագրվում են կամրջի պահպանման աշխատանքների միջանկյալ ուսումնասիրության ամփոփագրում : Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև կամրջի պահպանման աշխատանքների մատյանում: Կամրջի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրում և կամրջի պահպանման աշխատանքների մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

<u>բ) Կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում</u>

Կամրջի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը իրականացվում է մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը: Հիմնվելով միջանկյալ դիտարկումների արդյունքների վրա, կատարվում է կամրջի պահպանման գնահատումը՝ արդյունքները ձևակերպելով կամրջի պահպանման աշխատանքների ընդունման ամսական ամփոփագրում:

7. Պատասխանատուի կողմից կամրջի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են պահպանման պահանջները:

8. Պատասխանատուի կողմից կամրջի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են մասնակիորեն՝ աղյուսակ N1-ում բերված տոկոսաչափերով նվազեցումով, եթե պահպանման պահանջները լիարժեք ապահովված չեն:

Աղյուսակ N 1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

Կամրջի կոնստրուկտիվ տարրեր, թերություններ և դրանց վերացման պահանջվող առավելագույն ժամկետ	Թերությունը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում կամրջի պահպանման արժեքից պակասեցվող %
ա) Կամրջային մուտեցումներ, այդ թվում	**20**
Երթևեկամասի, կողնակների, մայթերի վրա աղբի և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 ժամ)	*3*
Երթևեկամասի վրա 3 մմ –ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն, մայթերի վրա 3 մմ –ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 2 օր)	*6*
Երթևեկամասի վրա 1000 քառ.մ ծածկի մակերեսի վրա 5 քառ.մ ավել փոսերի առկայություն, նստվածքների առկայություն, մայթերի վրա փոսերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*6*
Կողնակները հարթեցված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1օր)	*3*
Պարսպող համակարգ (արգելափակոցներ), ճանապարհային նշանները, ճանապարհային նշագծումը բացակայում են կամ վնասված են կամ վերանորոգված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 2օր)	*2*
բ) Ենթակամրջային գոտի, այդ թվում	**10**
Ենթակամրջային թեքլանջերի և ենթակամրջային գոտում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 ժամ)	*3*
Ենթակամրջային թեքլանջերը հարթեցված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1օր)	*3*
Ենթակամրջային գոտում գտնվող հենապատերի և կարգավորիչ պատերի վրա առաջացած վնասվածքների (որոնք հնարավոր է վերականգնել առանց հիմնական վերակառուցում իրականացնելու) վերանորոգված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝3օր)	*4*
գ) Կամրջային պաստառ, այդ թվում	**25**
Կամրջային պաստառի , դեֆորմացիոն կարերի, մայթերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն: Ձմեռվա ժամանակահատվածում նաև ձյան կամ մերկասառույցի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 ժամ)	*5*
Կամրջային պաստառի երթևեկամասի վրա 3 մմ –ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն, , մայթերի վրա 3 մմ –ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 2 օր)	*6*
Կամրջային պաստառի երթևեկամասի վրա 1000 քառ.մ ծածկի մակերեսի վրա 5 քառ.մ ավել փոսերի առկայություն, մայթերի վրա փոսերի առկայություն (վերացման պահանջվող	*6*

առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5օր)	
Պարապող համակարգը (արգելափակոցները) , բազրիքները , պարապետները, եզրաքարերը բացակայում են կամ վնասված են կամ վերանորոգված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3օր)	4
Դեֆորմացիոն կարերի վնասվածքների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	4
դ) Թռիչքային կառուցվածքներ	
1) Թռիչքային կառուցվածքներ (երկաթբետոնյա,բետոնյա և քարե), այդ թվում	**15**
Թռիչքային կառուցվածքների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 ժամ)	3
Ճաքերի , ջարդվածքատեղերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3օր)	6
Բետոնի պահպանիչ չվերականգնված շերտի և չմշակված բացված ամրանների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5օր)	6
2) Թռիչքային կառուցվածքներ (երկաթյա), այդ թվում	**15**
Թռիչքային կառուցվածքների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն: Ներկի վնասվածքների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 ժամ)	3
Մետաղյա կոնստրուկցիաները մաքրված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 օր)	3
Վնասված դուրգամակարերի և եռակցման կարերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5օր)	9
ե) Հենարաններ, այդ թվում	**15**
Հենարանների վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 ժամ)	3
Հենրանների վրա չվերանորոգված ճաքերի և ջարդվածքատեղերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5օր)	6
Հենրանների վրա չջրամեկուսացված վնասված մակերեսի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3օր)	6
է) Հենարանային մասեր, այդ թվում	**15**
Հենարանային մասերի վրա աղբի, ցեխի, բուսականության և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 ժամ)	3
Հենարանային մասերը յուղված և ներկված չեն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝3օր)	6
Հենարանային մասերի թույլացված հեղյուսների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝3օր)	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վառմաշ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«24» դեկտեմբեր 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՄԻԳ-16/1-4»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2015 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման գումարը /դրամ, դրամական միավոր/	Ընտրված տարբերակը /ըստ ամրագրված տարբերակի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«24» դեկտեմբերի 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՇԻԳ-16/1-4»
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ---- -ին կնքված N ---------- գնման
(Կատարողի անունը)
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- ----ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4»

ք. Երևան «21» դեկտեմբերի 2015թ.

«Վառմաշ» ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Կ. Աֆոյանի (նույնականացման քարտի՝ N 005342803, տրված 07.07.2014թ., 003-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Վառմաշ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Գործարանային 15
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930007407070100
ՀՎՀՀ 06912201
տնօրեն՝ Կ. Աֆոյան

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝

(ստորագրություն)

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1

"__ _" _____ 20__ թ.

Վճարող՝ «Վառմաշ» ՍՊԸ ՀՎՀՀ - 06912201	ԴԵԲԵՏ Հ/Հ 1930007407070100	ԳՈՒՄԱՐ (ԱՐԺՈՒՅԹԸ) 1627300
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ		
Շահառու՝ՀՀ տրանսպորտի և կապի նախարություն ՀՎՀՀ -02565518	ԿՐԵԴԻՏ	(ԳՈՒՄԱՐ) ՏԱՌԵՐՈՎ) մեկ միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր ՀՀ դրամ
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ. N 900005000758	

Գումարը բառերով՝ մեկ միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը՝ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1»

Վճարման նպատակը
պայմանագրի կատարման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-4

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները / Կ. Ափոյան / /_____/
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ